



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

հոկտեմբերի 2018 թվականի №
քաղ. Երևան

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՏԱՍԻ 38/3 ՀԱՍՑԵԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՍՊԱՌՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐՈՒԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Կոմիտասի 38/3 հասցեի բազմաբնակարան շենքի (այսուհետ՝ շենք) սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները կառուցապատողի փոխարեն իրականացնելու վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացված՝ «Տրանսպարենտ Սոլյուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի հուլիսի 12-ի դիմումը,

բ) Ընկերության 2018 թվականի հուլիսի 7-ի 04-ԴԳ02/2706 և օգոստոսի 8-ի № 04-ԴԳ02/3030 գրությունները, համաձայն որոնց՝ շենքի կառուցապատող «Հինգերորդ աստղ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման դիմում չի ներկայացրել, վերջինիս հետ շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագիր չի կնքել և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 2-ի վճռով ճանաչվել է սնանկ,

գ) Ընկերության սույն թվականի սեպտեմբերի 12-ի №04-ԴԳ02/3508 և «Տրանսպարենտ Սոլյուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեպտեմբերի 14-ի գրությունները, համաձայն որոնց՝ վերջիններս չեն առարկում շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006 թվականի դեկտեմբերի

27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 13.8 կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման համար Կանոնների 13.2 կետով սահմանված դիմում ներկայացնում, Ընկերության հետ կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) կնքում, միացման վճար վճարում և վճարումը հավաստող փաստաթղթերը Ընկերություն ներկայացնում է «Տրանսպարենտ Սոլյուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը.

2) էլեկտրական ցանցին միացման վճարը հաշվարկվում է համաձայն Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» №659Ն որոշման.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված միացման վճարի վճարման օրվանից մինչև շենքը փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 300 օրը.

4) չի թույլատրվում էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած անձից պահանջել կատարելու վճարումներ, տրամադրելու հատուցում, ներկայացնելու տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, սույն որոշմամբ, էլեկտրամատակարարման պայմանագրով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը և «Տրանսպարենտ Սոլյուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
հոկտեմբերի 2018թ.